ԱՆՁԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎԱՐՔԻ ԴԵՏԵՐՄԻՆԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԻՆՔՆԱԴԵՏԵՐՄԻՆԱՎՈՐՈՒՄԸ

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Մարդը իր բնույթով հասարակական էակ է։ Սակայն նա այդպիսին չի ծնվում։ Մարդը վերածվում է հասարակական էակի սոցիալականացման պրոցեսում, նախորդ սերունդների սոցիալական փորձի յուրացման հետևանքով։ Մարդու բոլոր անձնային յուրահատուկ որակները ձևավորվում են այդ պրոցեսում։ Տվյալ անձի հատկությունները, նրա վարքը, պահանջմունքները, շահերը և այլն հանդիսանում են որոշակի հասարակական միջավայրի հարաբերությունների արտացոլումը։ Օբյեկտիվ սոցիալական միջավայրը մարդու անձնային բոլոր հատկությունների վճռական և կարևորագույն հիմքն է, քանի որ «անձնական կեցությունը հասարակական գործունեությունն է»[1]։ Այլ կերպ ասած՝ անձը հանդիսանում է հասարակության պատմական զարգացման տվյալ էտապին բնորոշ բազմազան տնտեսական, քաղաքական, իրավական, բարոյական և այլ գործոնների ազդեցության օբյեկտ։ Նա «զարգացման սոցիալական կացությունների միասնական ազդեցությունն է... տարբեր սոցիալական կառուցվածքների և պատմական պրոցեսների ազդեցության օբյեկտը»[2]։ Բանն այն է, որ մարդու ողջ կյանքն ընթանում է մյուս մարդկանց հետ ունեցած սերտ կապի մեջ, տարբեր դասակարգերի, սոցիալական խմբերի, կոլեկտիվների շրջանակներում, որոնց հետ նա կապված է բազմաթիվ թելերով։ Անձի կյանքի պայմանները և կապերը, այդ սոցիալական հանրությունների հետ մեկտեղ, նրա շուրջը ստեղծում են գործոնների հարաբերականորեն կայուն որոշակի կոմպլեքսներ, որոնք էլ պայմանավորում են նրա գործունեության և վարքի բնույթը։

Սակայն անձի ձևավորման պրոցեսը չի կարելի հասկանալ որպես արտաքին միջավայրի միակողմանի ազդեցության արդյունք։ Ֆ. Էնգելսը նշում է, որ «այն ամենը, ինչը մարդուն դրդում է գործունեության, պետք է անցնի նրա գլխով»[3]։ Անձը ոչ թե շրջապատող սոցիալական միջավայրի ազդեցության պասսիվ օբյեկտն է, այլ որոշակի ինքնուրույնությամբ և ներքին կառուցվածքով օժտված կենդանի, ակտիվ սուբյեկտ։ Նա բարդ և ինքնակառավարվող էակ է։ Ինչպես նշում է Ի. Պավլովը, մարդը ինքնակառավարվող, ինքն իրեն պահպանող, վերականգնող, ուղղող և նույնիսկ կատարելագործող սիստեմ է[4]։

---

[1] Կ. Մարքս և Ֆ. Էնգելս, Из ранних произведений, էջ 590։

[2] Б. Г. Ананьев, Человек как предмет познания, Л., 1968, էջ 288։

[3] Կ. Մարքս և Ֆ. Էնգելս, Соч., т. 21, էջ 290։

[4] И. П. Павлов, Двадцатилетний опыт объективного изучения высшей нервной деятельности (поведения) животных, М., 1951, էջ 364։

Ելնելով անձի նման ըմբռնումից, նրա վարքի ձևավորման պրոցեսը պետք է դիտել մի կողմից որպես արտաքին սոցիալական պայմանների ազդեցության արդյունք, մյուս կողմից՝ որպես մարդու ներքին (անձնային) հատկությունների հետևանք, որովհետև «ինքնակառավարման պրոցեսներում սիստեմի փաստական վարքը երկու ծնողների՝ արտաքին և ներքին պատճառների զավակ է»[5], Ի տարբերություն ֆիզիկական սիստեմների, «ինքնակառավարվող սիստեմի վարքը հարաբերականորեն անկախ է արտաքին միջավայրից և մեծ չափով որոշվում է սիստեմի ներքին օրենքներով» (ընդգծումը մերն է—Ա. Խ.)[6],

Այսպիսով, արտաքին սոցիալական միջավայրը չի կարելի դիտել որպես անձի սոցիալական վարքի միակ դետերմինանտ, Ինքը՝ սոցիալական միջավայրը, հանդես է գալիս որպես անձի ներքին բովանդակության հետ սերտորեն կապված երևույթ, Հետևաբար, սոցիալական պայմանները մարդու վարքը դետերմինավորում են ոչ թե ինքնին, այլ փոխազդելով նրա ներքին հոգեբանական վիճակի հետ, Մարդու վարքը «դետերմինավորվում է արտաքին աշխարհով՝ միջնորդավորված նրա հոգեկան գործունեությամբ»[7],

Նշելով ներքին հոգեբանական գործոնների դերը անձի վարքի դետերմինավորման գործում, չի կարելի դրանք դիտել որպես մարդու գործունեությունը պայմանավորող բացարձակ ինքնուրույն պատճառներ՝ անկախ օբյեկտիվ հանգամանքներից, Անձի վարքը, վերջին հաշվով, պայմանավորված է օբյեկտիվ սոցիալական պայմաններով, Այստեղ բանը միայն այն չէ, որ անձի այդ «ներքին վիճակները» (պահանջմունքները, նպատակները, վարքի դրդապատճառները, արժեքային կողմնորոշումները և այլն), նրանց բնույթը պայմանավորված են որոշակի սոցիալական միջավայրով, մարդու նախորդ սոցիալական զարգացմամբ, այլև այն, որ անձի ցանկացած արարք, վարքագծի ցանկացած դրսևորում կատարվում են օբյեկտիվ սոցիալական պայմանների ազդեցության տակ, որոշակի օբյեկտիվ սոցիալական իրադրության մեջ, Հենց արտաքին պայմանների ազդեցության տակ են սկսում «աշխատել» անձի վարքի դետերմինավորման ներքին մեխանիզմները, Միայն նրանք են անձին «ստիպում» ընտրելու այս կամ այն վարքագիծը, «Այն օբյեկտիվ պայմանները,— գրում է Ս. Ռուբինշտեյնը,— որոնց մեջ մտնում է մարդը, որոշում են նրա սուբյեկտիվ վերաբերմունքը շրջապատի նկատմամբ, որն արտահայտվում է նրա վճիռների, հակումների և այլնի մեջ, Արտաքին պայմանների ազդեցության տակ ձևավորված այդ վերջինները (վճիռները, հակումները և այլն—Ա. Խ.), իրենց հերթին, միջնորդավորում են մարդկանց վարքի, գործունեության կախվածությունը այն արտաքին պայմաններից, օբյեկտիվ հարաբերություններից, որոնց մեջ ապրում է մարդը» (ընդգծումը մերն է—Ա. Խ.)[8],

Այսպիսով, անձի ներքին վիճակը սոսկ միջանկյալ օղակ է արտաքին միջավայրի և մարդու փաստական վարքի միջև, Անձի սոցիալական վարքը պայմանավորող հիմնական աղբյուրը օբյեկտիվ սոցիալական միջավայրն է,

---

5 Б. С. Украинцев, Самоуправляемые системы и причинность, М., 1972, էջ 27,

6 Նույն տեղում, էջ 40,

7 С. Л. Рубинштейн, Бытие и сознание, М., 1957, էջ 243,

8 Նույն տեղում, էջ 227—228,

Մարդու վարքի դետերմինավորման մեջ ներքին մեխանիզմների առանձնացումը նշանակում է միայն այն, որ նա մեխանիկորեն չի պատասխանում արտաքին միջավայրի ազդեցությանը, որ միևնույն սոցիալական պայմանները միանշանակորեն չեն որոշում նրա վարքը։

Վարքի դետերմինավորման արտաքին և ներքին մեխանիզմների դերը մարդու զարգացման տարբեր էտապներում տարբեր է։ Դեռևս Դ. Պիսարևը նկատել է, որ «գործնական կյանքը յուրաքանչյուրին ներկայանում է տարբեր ձևով՝ նայած նրա խառնվածքին, դիրքին, զարգացման աստիճանին և պայմաններին» (ընդգծումը մերն է—Ա. Խ.)[9]։ Եթե արտաքին պայմանները որպես վարքի դետերմինանտներ մարդուն ուղեկցում են նրա կյանքի հենց սկզբից, ապա ներքին մեխանիզմները սկսում են գործել մարդու սոցիալականացման որոշակի աստիճանում։ Որքան բարձր է մարդու սոցիալականացման աստիճանը, այնքան ավելի մեծ է ներքին մեխանիզմների դերը մարդու վարքի դետերմինավորման գործում։ Կարճ ասած, վարքի ներքին դետերմինանտները սկսում են գործել այն ժամանակ, երբ մարդը ձեռք է բերում անձնային հատկություններ։ Ներքին մեխանիզմների դերի կարևորությունը կախված է անձի զարգացածության աստիճանից, նրա ամբողջականությունից և հասարակական կապերի բազմազանությունից։ Այլ կերպ չի էլ կարող լինել, որովհետև վարքի դետերմինավորման ներքին մեխանիզմները ոչ թե մարդու բնածին հատկանիշներն են, բնազդները, այլ այն տարրերը (սոցիալական պահանջմունքները, նպատակները, ձգտումները, վարքի դրդապատճառները, կողմնորոշումները և այլն), որոնք ձևավորվում են սոցիալական փորձի յուրացման, այն է՝ սոցիալականացման պրոցեսում։

Մարդու կողմից սեփական վարքի ինքնակառավարման ունակությունը զարգացման տևական պրոցեսի արդյունք է։ Անձի սոցիալական բարդությունը չի կարելի հասկանալ ուսումնասիրելով նրա վարքի միայն արտաքին դրսևորումները՝ կտրված գիտակցության առանձնահատկություններից։ Իր զարգացման պրոցեսում մարդը ձեռք է բերում գիտակցության որոշակի մակարդակ, որը հսկայական դեր է խաղում նրա գործունեության մեջ և առանց որի անհնար է հասկանալ անձի վարքի ինքնադետերմինավորման պրոցեսը։ Մարդու վարքը սերտորեն կապված է գիտակցության հետ և չի կարող հասկանալի լինել նրանից կտրված։ Ի տարբերություն կենդանու, որն «իրեն չի տարբերում իր կենսագործունեությունից... Մարդն իր կենսագործունեությունը դարձնում է սեփական կամքի և գիտակցության առարկա»[10],

Գիտակցությունն արտացոլելով աշխարհի արտաքին երևույթները, դրանով իսկ արտահայտում է նաև մարդու վերաբերմունքը նրանց նկատմամբ։ Այդ վերաբերմունքը մարդու գիտակցության մեջ դրսևորվում է պահանջմունքների, նպատակների, ձգտումների, շահերի, զգացմունքների և այլնի ձևով։ Գիտակցության շնորհիվ անձն արտաքին աշխարհը պատկերացնում է իդեալական ձևով, կանխատեսում ապագան, արտացոլում իրադարձությունների զարգացման հետագա ընթացքը և հետագա հանգամանքներին համապատասխան ինքնորոշվում ու կարգավորում իր վարքը։ Կարճ ասած, շնորհիվ գիտակցության «դեռևս չիրականացված իրականությունը դետերմինավորում է,

[9] Д. И. Писарев, Избранные философские и общественно-политические статьи, М., 1949, էջ 41—42,

[10] К. Маркс и Ф. Энгельс, Из ранних произведений, էջ 565,

այնպիսի գործողությունները, որոնց միջոցով այն իրականացվում է»[11]: Գիտակցության միջոցով անձը համադրում և վերլուծում է իր վարքագծի հնարավոր տարբերակները՝ որոշ ժամանակ չդիմելով գործնական քայլերի։ Մարդն ընտրում է այն գործողությունները, որոնք համապատասխանում են նրա շահերին, նպատակներին և պահանջմունքներին։

Գիտակցության էական գծերից մեկը նպատակադրումն է: Հատկապես նպատակադրման մեջ է արտահայտվում իրականության գիտակցական արտացոլման կարգավորիչ դերն անձի վարքում։ Նպատակի էությունն այն է, որ մարդն իր գործունեությունն ուղղում է հասնելու համար որոշակի արդյունքների և, նպատակների բնույթին համապատասխան, ընտրում որոշակի միջոցներ և գործունեության եղանակներ։ Որպես գիտակցության կրող և գործունեության սուբյեկտ, նա կարող է դնել ցանկացած նպատակը՝ ենթարկելով նրան իր գործունեությունը։ Այդ պատճառով նպատակի ճիշտ որոշումը կամային, ազատ գործունեության և վարքի կարևորագույն հանգամանքներից մեկն է։

Անձն ընտրելով այս կամ այն նպատակը և նրա իրականացման միջոցները, դրանով իսկ կարգավորում է իր վարքը։ Նպատակադրման փաստն արդեն վկայում է, որ գործունեության ընթացքում անձը ելնում է ոչ թե արտաքին պայմանների անմիջական ազդեցությունից, այլ, ամենից առաջ, իր ներքին վիճակից (պահանջմունքներից, ձգտումներից, շահերից և այլն)։

Մարդու վարքի գիտակցական կարգավորման երկրորդ կարևորագույն գործոնը ընտրությունն է: Այն ոչ այլ ինչ է, քան «մարդու կողմից իրադրության առանձնահատկությունների, հարցի լուծման հնարավոր տարբերակների բացահայտումը և մի շարք ընդունելիներից (կամ տարբերակներից—Ա. Խ.) մեկին նախապատվություն տալը՝ որպես ամենահամապատասխանի»[12]։ Ուստի չի կարելի կասկածի տակ առնել այն, որ ընտրությունը հնարավոր է միայն անձի կողմից իր կենսական խնդիրների և նպատակների գիտակցման հետևանքով, և ընտրության բնույթը կախված է հենց գիտակցման այդ աստիճանից։ Որքան ավելի է մարդը գիտակից, այնքան նա ընտրության ավելի մեծ հնարավորություն ունի։ Ճիշտ ընտրություն կատարելու համար մարդը պետք է լավ իմանա և գնահատի ոչ միայն իր շահերն ու պահանջմունքները, այլև օբյեկտիվ հանգամանքներն ու սպասվող արդյունքները։ Այլ կերպ ասած՝ մարդը պետք է պարզորոշ պատկերացնի այն օբյեկտիվ և սուբյեկտիվ հանգամանքների ամբողջությունը, որոնց ազդեցության տակ իրականացվում է ընտրությունը։ Այդ պատճառով էլ ընտրության պրոցեսը կրում է իմացաբանական բնույթ, այսինքն՝ այն կարող է իրականանալ շրջապատող իրականության արտացոլման հիման վրա։

Վարքի գիտակցական կարգավորման ոչ պակաս գործոն է նաև կամքը: Ցանկալի արդյունքի հասնելու համար նպատակադրումը և ընտրությունը դեռևս բավական չեն։ Մարդը նպատակին հասնելու համար պետք է դրսևորի որոշակի կամային որակներ։ Բանն այն է, որ առաջադրված նպատակին կարելի է հասնել միայն գործնական ճանապարհով, որի մասին խոսելն անիմաստ

---

[11] С. Л. Рубинштейн, նշվ. աշխ., էջ 284։

[12] К. А. Новиков, Свобода выбора («Проблема свободного выбора и активности личности», Краснодар, 1972, էջ 56)։

է առանց անձի կամային հատկությունների։ Ինչպես նշվում է մարքսիստական գրականության մեջ, «մարդու կամային վարքում արտացոլվում է նրա գիտակցության գործունյա կողմը»[13]։ Կամքը գիտակցության այն կողմն է, որն արտահայտում է անձի՝ ցանկալի արդյունքի հասնելու համար նպատակասլաց գործողություններ կատարելու ունակությունը, և որը դրսևորվում է մարդու անմիջական գործունեության կարգավորման մեջ։ Կամային գործողությունների մեջ դրսևորվում է անձի գիտակցական ակտիվությունը։

Գործունեության ընթացքում մարդն իրեն հաշիվ է տալիս իր նկատառումների, ապրումների, մտքերի և ձգտումների մասին։ Ուստի գիտակցությունը հանդես է գալիս ոչ միայն որպես շրջապատող միջավայրի իմացություն, այլև որպես ինքնաճանաչում, այսինքն ինքնագիտակցություն։ Լինելով գիտակցության ձևերից մեկը, ինքնագիտակցությունը անձի սոցիալական վարքի կարգավորման ներքին կարևորագույն միջոց է։ Ինքնագիտակցության շնորհիվ անձն իր վարքը հսկելու, շրջապատի հետ իր կապերը կարգավորելու հնարավորություն է ստանում՝ դրանով իսկ ակտիվացնելով իր սոցիալական գործունեությունը։ Իր վարքը հսկելու, գործունեությունը ղեկավարելու համար մարդը պետք է ճանաչի իրեն։ Ինքնագիտակցությունն այլ կերպ, քան որպես ինքնաճանաչման արդյունք, չի էլ կարող գոյություն ունենալ։ Դեռ ավելին, ճանաչել իրեն՝ նշանակում է օժտված լինել ինքնագիտակցությամբ։ Ճանաչելով իրեն, անձը բացահայտում է իր ներքին (հոգեկան) և ֆիզիկական առանձնահատկությունները և իր վարքը կարգավորում այդ առանձնահատկություններին համապատասխան։

Ինչպես գիտակցությունը, այնպես էլ ինքնագիտակցությունը, որպես վարքի կարգավորիչ, հանդես են գալիս մարդու զարգացման որոշակի աստիճանում։ Երեխան սկզբում դեռևս իրեն չի առանձնացնում շրջապատող աշխարհից։ Մարդու զարգացման այդ շրջանում ինքնագիտակցության մասին խոսք լինել չի կարող։ Մարդն աստիճանաբար իրեն առանձնացնում է շրջապատի մյուս առարկաներից։ «Մանկական ինքնազգացումից,— գրում է Ի. Սեչենովը,— հասուն տարիքում ծնվում է ինքնագիտակցությունը, որը մարդուն տալիս է իր գիտակցական գործողություններին քննադատորեն վերաբերվելու, այսինքն՝ իր ողջ ներքինը արտաքինում տեղի ունեցողից առանձնացնելու, այն (ներքինը—Ա. Ե.) վերլուծելու և արտաքինի հետ համադրելու (համեմատելու), մի խոսքով, սեփական գիտակցության գործողությունները ուսումնասիրելու հնարավորություն»[14]։ Ասվածից հետևում է, որ ինքնագիտակցությունը մարդու անձնային հատկությունն է։ Այն ծագում է նրա սոցիալականացման հետևանքով, այսինքն՝ ձևավորվում է մարդու զարգացման որոշակի աստիճանում և հանդես գալիս որպես նրա վարքի կարգավորման ներքին կարևորագույն պայման։

Ինքնագիտակցությունը ձևավորվում է մյուս մարդկանց ճանաչելու, իր գործունեության և վարքի վերլուծության, ինչպես նաև ինքնադիտարկման շնորհիվ։ Այլ կերպ ասած՝ ինքնագիտակցությունը ձևավորվում է մյուս մարդկանց հետ հաղորդակցվելու, անմիջական գործունեության ընթացքում և հա-

---

[13] «Психологические проблемы социальной регуляции поведения», М., 1976, էջ 22։

[14] И. М. Сеченов. Избранные философские и психологические произведения, М., 1947, էջ 504։

կադարձ ազդեցություն ունի վարքի վրա՝ այն կազմակերպելու և կարգավորելու իմաստով։

Ինքնագիտակցությունը հանդես է դալիս ոչ միայն որպես վարքի կարդավորիչ, այլև անձի զարգացմանը և կատարելագործմանը նպաստող կարևորագույն գործոն։ Բանն այն է, որ գործունեության ընթացքում անձի կողմից սեփական հնարավորությունների գիտակցումը, «այդ հնարավորություններին համապատասխանող գործունեության ընտրությունը, գործունեության անհատական հնարների և եղանակների ձևավորումը ծառայում են որպես անձի զարգացման, նրա կատարելագործման կարևոր կարգավորիչ գործոններ»[15]։ Մարդը, որպես ակտիվ էակ, ոչ միայն հարմարվում է արտաքին պայմաններին, այլև օրյեկտիվ օրենքների ճանաչման հիման վրա այդ պայմանները հարմարեցնում է իր պահանջներին, և այդ ընթացքում փոխում և զարգացնում է ինքն իրեն։

Վարքի կարգավորման մեջ հատկապես կարևոր դեր է խաղում ինքնագիտակցության այնպիսի տարրերից մեկը, ինչպիսին է ինքնագնահատումը։ Անձը գիտակցելով իր կախվածությունը հասարակությունից, իր գործունեության մեջ ձգտում է հասնել շրջապատի մարդկանց հարգանքին։ Հասարակական միջավայրի հետ ունեցած գնահատիչ փոխազդեցության ընթացքում մշակվում են ինքնագնահատման և ինքնահարգման զգացմունքները՝ որպես ինքնագիտակցության կարևորագույն տարրեր և, հետևաբար, որպես սոցիալական վարքի ներքին կարգավորիչներ։ Մարդն ինքն զգում է ինքնահարգման կարիք և ընտրում այնպիսի վարքագիծ, որը համապատասխանի ոչ միայն մյուս մարդկանց պահանջներին ու շահերին, այլև իր ներքին բարոյական պատկերացումներին ու համոզմունքներին։

Անձի ձևավորումը երկկողմանի պրոցես է։ Նա ձևավորվում է, մի կողմից, տարերայնորեն, օբյեկտիվ սոցիալական պայմանների ազդեցության, իսկ մյուս կողմից՝ հասարակության պլանաչափ և նպատակասլաց ներգործության, այսինքն՝ դաստիարակության հետևանքով։ Այն, թե ինչպիսի՞ն կլինի մարդու վարքի ուղղվածությունը, դրակա՞ն (հասարակության շահերից բխող), թե՞ հակահասարակական՝ մեծ չափով կախված է դաստիարակությունից։ Ինչպես իրավացիորեն նշում է Ս. Ռուբինշտեյնը, այն հարցը, թե «ինչպիսի գաղափարական բովանդակություն է ձեռք բերում մարդու համար դրդիչ ուժը, ունի առաջնակարգ նշանակություն։ Այն լուծվում է մարդու կյանքի ընթացքում, դաստիարակության պրոցեսում։ Պատշաճ գաղափարների պատշաճ դրդիչ ուժի մշակումը դաստիարակության կարևորագույն նպատակն է»[16]։ Այդ պատճառով մարդու վարքը և գործունեությունը հասարակայնորեն անհրաժեշտ ուղու վրա դնելու նպատակով տարվում է դաստիարակչական հետևողական աշխատանք։

Դաստիարակության նպատակը մարդու գործունեության մեջ վարքի անձնական դրդապատճառների հասարակայնորեն անհրաժեշտ ոլորտի ընդլայնումն ու ամրապնդումն է, ինչպես նաև՝ դրդապատճառի և արարքի միասնության հասնելը։ Դաստիարակության պրոցեսում անձի մոտ մշակվում է արտաքին ազդեցություններին ընտրողականորեն վերաբերվելու, հանգամանք-

---

[15] «Психологические проблемы социальной регуляции поведения», էջ 26։

[16] С. Л. Рубинштейн. նշվ. աշխ., էջ 265—266։

ներին կուրորեն չհարմարվելու և առաջավոր բարոյական գաղափարներով առաջնորդվելու ունակություն։ Այդ պրոցեսում հատկապես կարևոր նշանակություն ունի անհատական բարոյական զարգացմանը բնորոշ հակասությունների բացահայտումը։ Ընդ որում, նման հակասությունների առկայության սոսկ արձանագրումը դեռևս բավական չէ։ Խիստ կարևոր է տվյալ կոնկրետ պայմաններում նրանց դրսևորման առանձնահատկությունների ճշգրիտ վերլուծությունը։ Անձի գործունեությունը միայն այդ դեպքում կարելի է դնել հասարակայնորեն անհրաժեշտ ուղու վրա, որովհետև «հասարակական կյանքի ցանկացած բնագավառում դաստիարակչական ազդեցության սիստեմը գործուն և արդյունավետ է այն ժամանակ, երբ հաշվի են առնում միջավայրի սոցիալականացնող ազդեցության ինչպես ընդհանուր օրինաչափությունները, այնպես էլ յուրահատուկ առանձնահատկությունները»[17]։ Ճիշտ դաստիարակության դեպքում անձի սոցիալական վարքը ձեռք է բերում նպատակասլացություն և հարուստ բովանդակություն։

Անձի վարքի ինքնադետերմինավորման պրոցեսում զգալի դեր են խաղում նաև հույզերը։ «Առանց... հուզական-շարժընթացիկ բնութագրության մարդը չէր կարող գլուխ հանել շրջապատող կյանքի իրադարձությունների մեջ և համապատասխան վերաբերմունք ցուցաբերել նրանց նկատմամբ»[18]։ Այդ պատճառով դաստիարակությունը մեծ նշանակություն ունի մարդկանց մոտ դրական այնպիսի զգացմունքների ձևավորման տեսակետից, ինչպիսիք են՝ կոլեկտիվիզմը, հայրենասիրությունը, պարտքի գիտակցումը և այլն։ Հուզական ապրումների դաստիարակությունը բարձրացնում և ուժեղացնում է նրանց ազդեցությունը անձի վարքի վրա։ Բանն այն է, որ անձի հուզական ոլորտը, ի տարբերություն կենդանիների, կրում է բարդ բնույթ։ Այն ծագում է ոչ թե ինքնին, այլ որոշակի սոցիալական միջավայրում։ Այլ կերպ ասած՝ նա չի կրում կենսաբանական բնույթ, այլ հանդես է գալիս որպես սոցիալական երևույթ։ Մարդկային հույզերը ծագում են «մեր նպատակների, իդեալների, ցանկությունների իրականացման կամ խախտման» հետևանքով և այդ պատճառով էլ «նրանք խորը կերպով կապված են անձի ձգտումների իրականացման, նրա համոզմունքների, իդեալների և ապագայի մասին երազանքների հետ»[19]։ Եվ քանի որ այդ հույզերն ունեն սոցիալական բնույթ, ապա դաստիարակության ընթացքում ստեղծվում են նրանց էության, ուղղվածության և, հետևաբար, մարդկանց վարքի վրա ազդելու հնարավորություն։

Մարդը, որպես կամային որոշակի օրինակներով օժտված սոցիալական էակ, պետք է մշտապես իր ներքին ձգտումները հարաբերի շրջապատող հասարակական միջավայրի օբյեկտիվ պայմանների հետ։ Ներքինի և արտաքինի ճիշտ հարաբերակցությունն իրագործվում է ոչ միայն դաստիարակության, այլև ինքնադաստիարակության միջոցով։ Եթե դաստիարակությունը հասարակության նպատակասլաց ազդեցությունն է մարդու վրա՝ վարքի հասարակայնորեն անհրաժեշտ որոշակի ներքին դետերմինանտներ ձևավորելու

---

[17] Васил Момов, Человек. Мораль. Воспитание, М., 1975, էջ 60։

[18] В. Г. Асеев, Мотивация поведения и формирование личности, М., 1976, էջ 103։

[19] Васил Вичев, Мораль и социальная психика, М., 1978, էջ 233։

նպատակով, ապա ինքնադաստիարակությունը ոչ այլ ինչ է, քան անձի գիտակցական և պլանաչափ աշխատանքը իր վրա, որը նպատակ է հետապնդում մշակելու հասարակական գործունեության համար անհրաժեշտ որոշակի հատկություններ։ Դժվար չէ նկատել, որ և՛ դաստիարակությունը, և՛ ինքնադաստիարակությունը վարքի կարգավորման ներքին մեխանիզմները կատարելագործելու նպատակ են հետապնդում։ Բայց սա չի նշանակում, թե նրանք նույնական են։ Դաստիարակությունը հանդես է գալիս որպես վարքի կարգավորման արտաքին գործոն, իսկ ինքնադաստիարակությունը սուբյեկտի ազդեցությունն է սեփական գործունեության վրա։ Սակայն դաստիարակությունը և ինքնադաստիարակությունը սերտորեն կապված են իրար հետ։ Նրանց հարաբերության մեջ վճռական դերը պատկանում է դաստիարակությանը։ Հենց դաստիարակությունն է անհրաժեշտ հող ստեղծում ինքնադաստիարակության համար, որը դրսևորվում է մարդկանց մոտ բարոյական, հոգեբանական, ճանաչողական և կամային հատկանիշների ձևավորման մեջ։ Վարքի կարգավորման մեջ ինքնադաստիարակության ազդեցության աստիճանը կախված է դաստիարակության բնույթից և ուղղվածությունից, նրա այն սկզբունքներից, որոնք գոյություն ունեն տվյալ հասարակության մեջ։

Ինքնադաստիարակությունը սերտորեն կապված է նաև ինքնագիտակցության հետ։ Դեռ ավելին, ինքնադաստիարակությունն անհնարին է առանց ինքնագիտակցության։ Այստեղ, իհարկե, բանը ոչ միայն այն է, որ դրանք երկուսն էլ հանդես են գալիս որպես սուբյեկտի հարաբերություն սեփական անձի նկատմամբ, այլև այն, որ ինքնադաստիարակությունն անհրաժեշտորեն ենթադրում է իր որակների և առանձնահատկությունների գիտակցում, այսինքն՝ ինքնագիտակցություն։ Իրոք, անձն իր մոտ որոշակի որակներ մշակելու համար պետք է լավ իմանա իր հնարավորությունները, ընդունակությունները, բնավորության գծերը, տեղն ու դերը հասարակության մեջ և այլն։ Հակառակ դեպքում ինքնադաստիարակության մասին խոսք չի էլ կարող լինել։ Որքան ավելի է զարգացած անձի ինքնագիտակցությունը, այնքան նա ինքնադաստիարակության միջոցով իր վարքը կարգավորելու ավելի մեծ հնարավորություն ունի։

Ընդգծելով ինքնագիտակցության և ինքնադաստիարակության անխզելի կապը, չի կարելի դրանք նույնացնել։ Ինքնագիտակցությունն անձի կողմից իր հատկանիշների ճանաչումն է, բայց ինքնաճանաչումը դեռևս սեփական վարքի կարգավորում չէ։ Այն միայն վարքի ինքնակարգավորման հնարավորություն է տալիս։ Մարդը կարող է հիանալիորեն իմանալ իր հատկությունները, բայց գործունեության մեջ չառաջնորդվել նրանցով, եթե օժտված չէ համապատասխան կամային որակներով։ Ինքնադաստիարակության միջոցով անձն իր մեջ զարգացնում է անհրաժեշտ որակներ՝ ձգտելով ազատվել հակաբարոյական, հասարակության համար անընդունելի զգացմունքներից ու ձգտումներից։ Այդ պատճառով էլ ինքնադաստիարակությունը նպատակ է հետապնդում ձևավորել անձի կամային որակները՝ ինքնաճանաչման հիման վրա։ Ինքնադաստիարակությունը որոշակի ներքին հատկությունների՝ որպես մարդկանց գործունեության և վարքի դետերմինանտների «նախապատրաստություն է»։ Ուստի, անձի ակտիվությունն իր վարքի դետերմինավորման մեջ ցայտուն կերպով դրսևորվում է հատկապես ինքնադաստիարակության մեջ։

ДЕТЕРМИНАЦИЯ И САМОДЕТЕРМИНАЦИЯ СОЦИАЛЬНОГО ПОВЕДЕНИЯ ЛИЧНОСТИ

АРАМ ХАЧАТРЯН

Резюме

Процесс формирования и развития личности осуществляется в определенной социальной среде, в конкретных общественных отношениях. Следовательно, характер и поведение личности определяется окружающими социальными условиями.

Однако процесс формирования личности нельзя понимать как результат одностороннего влияния среды. Личность не пассивный объект воздействия внешних социальных условий, а живой и активный субъект, обладающий автономией в своем развитии. Поэтому в процессе детерминации социального поведения личности важную роль играют и такие ее внутренние качества, как: потребности, интересы, мотивации к действию, установки. Особенно важная роль в этом процессе принадлежит сознанию и самосознанию, характер и содержание которых во многом зависит от воспитания и самовоспитания.